ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/197/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 14 օգոստոսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի օգոստոսի 14-ին, քննելով Դատավորի օգնական Նարինե Վարդանի Մնացականյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/197/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ Դատավորի օգնական Նարինե Վարդանի Մնացականյանի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված կարգով Դատական դեպարտամենտի կողմից ներկայացված հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրի տվյալների համաձայն՝ Նարինե Վարդանի Մնացականյանը

հանդիսանում է 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ:

1.3 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1255/551-2024 գրությամբ Նարինե Վարդանի Մնացականյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում վերջինս նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 12:00-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Նարինե Վարդանի Մնացականյանի կողմից ստացվել է 2024 թվականի ապրիլի 29-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.4 2024 թվականի մայիսի 30-ին պատշաճ ծանուցված Նարինե Վարդանի Մնացականյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/206/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 01/2258-2024 գրությամբ Նարինե Վարդանի Մնացականյանին է ուղարկվել 2024 թվականի օգոստոսի 6-ին՝ ժամը՝ 12:45-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.6 2024 թվականի օգոստոսի 6-ին վարույթի մասնակցի կողմից ներկայացվել է միջնորդություն գործի քննությունը մինչև սույն թվականի օգոստոսի 14-ը հետաձգելու մասին, միաժամանակ, վերջինս հայտնել է, որ ի լրումն 2024 թվականի մայիսի 15-ին Հանձնաժողով ներկայացված ապացույցի, անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել լրացուցիչ ապացույց առ այն, որ վերջինս ժամանակավորապես զբաղեցրել է երեխայի խնամքի արձակուրդում գտնվող դատավորի օգնական [redacted] պաշտոնը, որն այս պահին իր տիրապետության տակ չէ: Միաժամանակ վերջինս խնդրել է հնարավորություն ընձեռել ներկայացնել անհրաժեշտ լրացուցիչ ապացույց, որը հնարավոր կլինի ներկայացնել միայն 2024 թվականի օգոստոսի 14-ին:

1.7 Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը բավարարել է վարույթի մասնակցի միջնորդությունը, և հետաձգելով գործի քննությունը՝ նշանակել 2024 թվականի օգոստոսի 14-ին՝ ժամը 15:30-ին:

1.8 2024 թվականի օգոստոսի 13-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3611-2024 գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ վարույթի մասնակցի կողմից ներկայացվել է պարզաբանում:

1.9 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Նարինե Վարդանի Մնացականյանի բացակայությամբ 2024 թվականի օգոստոսի 14-ին՝ ժամը՝ 15:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II.Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի օգոստոսի 13-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3611-2024 գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ վարույթի մասնակցի կողմից ներկայացվել է պարզաբանում առ այն, որ 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորություն չի ունեցել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականի սեպտեմբերի 22-ից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պարտականությունները ժամանակավորապես կատարելու նպատակով իր հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև նպատակային արձակուրդում գտնվող [redacted] ([redacted] 18.08.2020 - 19.01.2021թթ. գտնվել է հղիության և ծննդաբերության արձակուրդում, իսկ 20.01.2021 - 30.12.2021թթ.՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում) աշխատանքի ներկայանալու օրը:

Միաժամանակ նշել է, որ նույն պաշտոնը զբաղեցնող և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատակից՝ [redacted], իր՝ ժամանակավոր պաշտոնավարման ժամանակահատվածի՝ այդ թվում և 2021թ. պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու համար, ներկայացրել է համապատասխան հայտարարագրերը:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/197/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Դատավորի օգնական Նարինե Վարդանի Մնացականյանը «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորություն չի ունեցել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականի սեպտեմբերի 22-ից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի

պարտականությունները ժամանակավորապես կատարելու նպատակով Նարինե Վարդանի Մնացականյանի հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև նպատակային արձակուրդում գտնվող [redacted] ([redacted] 18.08.2020 - 19.01.2021թթ. գտնվել է հղիության և ծննդաբերության արձակուրդում, իսկ 20.01.2021 - 30.12.2021թթ.՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում) աշխատանքի ներկայանալու օրը:

3.2 Հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի Ա-01/2020 որոշմամբ պաշտոնատար անձի պարտականությունները ժամանակավորապես կատարող անձանց համար սահմանվել է բացառություն, մասնավորապես՝ նշված որոշման Հավելված 1-ով սահմանված կարգի 6.1 կետով սահմանվում է, որ սույն կարգի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձը համարվում է համապատասխան պաշտոնը զբաղեցնող բոլոր այն դեպքերում, երբ նա իրականացնում է իրեն վերապահված լիազորությունները, այդ թվում՝ ժամանակավոր պաշտոնակատարի կարգավիճակով, պայմանագրային հիմունքներով կամ այլ եղանակով, **բացառությամբ՝** համատեղության կարգով ժամանակավոր պաշտոնակատար եւ **հետծննդյան եւ երեխայի խնամքի հետ կապված արձակուրդ գնալու հիմքով տվյալ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու** եւ Ազգային ժողովի պատգամավորի հասարակական հիմունքներով օգնականի դեպքերի, այդ դեպքում նրանց տվյալները ռեեստրով չեն տրամադրվում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.4 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.5 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.6 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.8 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

4.9 Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

2024 թվականի օգոստոսի 13-ին Նարինե Մնացականյանի կողմից ներկայացվել են ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյանի 2021 թվականի

նոյեմբերի 5-ի թիվ 1527-Ա հրամանը՝ ժամկետային աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին, ինչպես նաև ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի կողմից 2024 թվականի օգոստոսի 9-ին տրված թիվ Ե-6405 տեղեկանքը՝ Նարինե Մնացականյանի հետ դատավորի օգնականի պարտականությունները ժամանակավորապես կատարելու նպատակով կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դատավորի օգնական Նարինե Վարդանի Մնացականյանն Օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 247-րդ, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նարինե Վարդանի Մնացականյանին ազատել վարչական պատասխանատվությունից կարճելով ՎԻՎ/197/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Վարդանի Մնացականյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ